

---

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (1998-2008)**

**ՌՈՍԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հայ-վրացական հարաբերություններում առանցքային տեղ են զբաղեցնում երկու երկրների միջև առկա տնտեսական փոխհարաբերությունները: Լինելով հարևան երկրներ և մաս կազմելով միևնույն տարածաշրջանի՝ Հայաստանի ու Վրաստանի միջև հաստատվել են սերտ առևտրատնտեսական կապեր: Խորհրդային Միության փլուզումից հետո պարզ դարձավ, որ նախկինում նրա կազմում ընդգրկված հանրապետությունները չեն կարող արագորեն և արդյունավետ կերպով կառուցել առանձին տնտեսություն, քանի որ նրանք շուրջ 70 տարի գտնվել էին միևնույն տնտեսական համակարգի մեջ՝ ունենալով սերտորեն փոխկապակցված տնտեսություններ, հետևաբար նախկինում ստեղծված կապերի վերացումը կարող էր հանգեցնել այս երկրների տնտեսությունների քայքայմանն ու կործանմանը: Բացառություն չէին նաև Հայաստանն ու Վրաստանը, ուստի երկու երկրներն էլ ձեռնամուխ եղան միմյանց հետ նոր տիպի տնտեսական հարաբերությունների ստեղծմանը: Այդ գործընթացը սկսվեց 1990-ականների սկզբներին, սակայն Անդրկովկասի տարածաշրջանում ծագած մի շարք քաղաքական խնդիրների պատճառով այն զարգանում էր շատ դանդաղ: Թեպետ Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի ու Վրաստանի անկախացումից անցել է ավելի քան 20 տարի, այս երկրները դեռևս շարունակում են կրել հետխորհրդային տնտեսական ճգնաժամի հետևանքները: Կարելի է պնդել, որ հայ-վրացական արդի տնտեսական հարաբերությունները կարգավորվում են այն նույն սկզբունքների ու չափանիշների հիման վրա, որոնք սկզբնավորվեցին 1990-ական թվականներին: Հայ-վրացական տնտեսական սերտ հարաբերությունների ստեղծման համար հիմք ծառայած գործոնները կարելի է ներկայացնել հետևյալ հերթականությամբ. 1) Խորհրդային Միությունից մնացած ժառանգություն և երկու երկրների տնտեսական համակարգերի միջև առկա փոխկապվածություն, 2) երկու երկրների՝ հարևաններ լինելու հանգամանքը և 3) Հայաստանն ու Վրաստանը համարվում են բարեկամական երկրներ, իսկ տնտեսական հարաբերությունները բարեկամական կապերի մի մասն են:

Հայաստանում 1998 թվականից զարգացման գերակա ուղղություն հայտարարվեց տնտեսական բնագավառը<sup>1</sup>: Հայաստանը սկսեց վարել ակտիվ արտաքին տնտեսական քաղաքականություն, որը կարող էր օգնել երկրին ավելի արագ դուրս գալու համաշխարհային շուկա և ավելի արդյունավետ օգտագործելու հաստատված արտաքին տնտեսական կապերը: Իսկ արտաքին տնտեսական ինտեգրման համար անհրաժեշտ էր բարելավել երկրում առկա ենթակառուցվածքները՝ գրավիչ դարձնելով Հայաստանը արտաքին ներդրողների համար: Արդեն 2007 թ. Հայաստանում գործում էր օտարերկրյա կապիտալով 3347 ընկերություն<sup>2</sup>: Սա Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության արդյունավետության ակնառու վկայությունն է: Թեև այս ձեռնարկությունների մեծ մասը պատկանում էր ռուսական, իրանական և ամերիկյան կապիտալին, այնուամենայնիվ Հայաստանում սկսեցին ներդրումներ անել նաև ավելի փոքր երկրների քաղաքացիներ, այդ թվում՝ Վրաստանի: Հայաստանը սկսեց ակտիվորեն համագործակցել միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ, իսկ 2003 թ. փետրվարի 5-ին դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ<sup>3</sup>: Սա բավականին կարևոր և լուրջ քայլ էր Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության զարգացման և ընդլայնման տեսանկյունից: Հարևան երկրների հետ առևտրատնտեսական հարաբերություններում ևս զարգացման նոր ուղիներ և հեռանկարներ բացվեցին: 1998-2008 թթ. Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմքը, ինչպես և 1990-ականների սկզբներին, շարունակում էր մնալ արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը՝ արտահանման խթանման, ներմուծման կրճատման, ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացման, արտասահմանյան ներդրումների ներգրավման, արտահանման և ներմուծման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքների կատարելագործման միջոցով: Իսկ այս խնդիրների լուծումը մասամբ եղել և մնում է կախված նաև հայ-վրացական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման և կատարելագործման գործընթացից:

Հայաստանի և Վրաստանի տնտեսական համագործակցությունը հիմնականում ներառում է տարանցման և վրացական տարածքով դեպի Հայաստան և հակառակը ապրանքաշրջանառության, ինչպես նաև Վրաստանի տարածքով էներգառեսուրսների ներկրման հարցերը: Հայաստան-Վրաստան ապրանքաշրջանառությունն իրականացվում է երկաթուղով և երկու հիմնական ավտոճանապարհներով՝ Բագրատաշենի և Բավրայի անցակետերով: Այլ երկրներից Վրաստանի տարածքով

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն. 1998-2007», Եր., 2008, էջ 13:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 10:

դեպի Հայաստան ապրանքաշրջանառությունն իրականացվում է Բաթումի և Փոթի նավահանգիստներով, ինչպես նաև Թուրքիայից եկող ավտոճանապարհներով: Բացի առևտրային գործընկերների հետ կապը պահելու և առևտրաշրջանառություն իրականացնելու համար տարանցիկ կարևոր ճանապարհ լինելուց՝ Վրաստանը նաև ինքն է հանդիսանում Հայաստանի կարևոր տնտեսական գործընկերներից մեկը: Հայաստանից Վրաստան են արտահանվում հիմնականում շինանյութեր, ապակյա իրեր, կաուչուկ, պլաստմասսա, անասնաբուժական և գյուղ-մթերքներ, մեքենաներ, մեխանիզմներ և բժշկական ապրանքներ: Իսկ Վրաստանից Հայաստան ներմուծվում է հիմնականում պատրաստի սննդամթերք, գյուղտնտեսություն, ազոտային պարարտանյութեր, մետաղյա իրեր, փայտանյութ և փայտե իրեր<sup>4</sup>: Հարկ է նշել, որ վերջին ժամանակահատվածում որոշակի փոփոխություններ են մտել Վրաստանից Հայաստան ներմուծվող ապրանքային հաշվեկշռի մեջ. սկսել է մեծ տեղ զբաղեցնել ավտոմեքենաների վերարտահանումը: Վրաստանը վերջին տարիներին մեծ թվով ավտոմեքենաներ է ներկրում ԱՄՆ-ից, ճապոնիայից և եվրոպական երկրներից ու վերարտահանում դրանք հարևան երկրներ, որոնց մեջ Հայաստանը զբաղեցնում է կարևոր տեղ՝ ներկրելով այդ ավտոմեքենաների շուրջ 30-35 տոկոսը<sup>5</sup>: Ընդ որում՝ վերջին 3-4 տարիներին մարդատար ավտոմեքենաների արտահանումը կազմում է Վրաստանի արտահանման ընդհանուր ծավալի 20-25 տոկոսը<sup>6</sup>:

Հայաստանի և Վրաստանի միջև 1998-2008 թթ. կնքվել են տնտեսական մի շարք պայմանագրեր և համաձայնագրեր: 1996 թ. ապրիլի 6-ին կնքվել է «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 18.01.1999 թ., իսկ 1997 թ. հուլիսի 3-ին՝ «Գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 29.09.1998 թ., 26.09.1998 թ.: «Ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 07.06.1999 թ.: 2001 թ. հոկտեմբերի 23-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև առևտրատնտեսական բնագավառում ընկերակցության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» համաձայնագիր<sup>7</sup>: Հայաստանի և Վրաստանի միջև գործում են կապի և տրանսպորտի, բնապահպանության, քաղաքաշինության, գյուղատնտեսական,

<sup>4</sup> Տե՛ս «Статистический Ежегодник Армении – 2010». Ер., 2010:

<sup>5</sup> Տե՛ս «External Trade of Georgia 2009», Tbilisi, 2010:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս «ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընթացիկ արխիվ, ՀՀ երկկողմ համաձայնագրերի ստորագրման և վավերացման ցանկ», եր., 2008, էջ 13:

տնտեսական զարգացման, էներգետիկայի և այլ բնագավառներին վերաբերող մի շարք պայմանագրեր և<sup>8</sup>, որոնք խոսում են երկու երկրների միջև առկա սերտ համագործակցության մասին:

Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական փոխգործակցության կարևորագույն ճյուղերից մեկն էլ մաքսային ոլորտն է, որը կարգավորելու համար երկու երկրների միջև պայմանագրեր կնքվել են դեռևս 1990-ականների սկզբներին: Եթե նշելու լինենք այս բնագավառում անելիքները, ապա կարելի է առանձնացնել դրանց մի քանի ուղղություն.

- Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ստորագրված միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի վերանայում, նոր համաձայնագրերի ստորագրում՝ մաքսային քաղաքականության ժամանակակից, միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով,

- մաքսային ձևակերպումների ընթացակարգերի պարզեցում,

- երկու պետությունների տարածքներով անցնող բեռների՝ հիմնականում տարանցիկ, ուղևորափոխադրումների նկատմամբ առավել բարենպաստ, անարգել պայմանների ստեղծում,

- մաքսային հսկողության ուժեղացման նպատակով երկու պետությունների շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ միջոցառումների համապատասխան ծրագրերի մշակում և դրանց իրագործում,

- երկու երկրների մաքսային օրենսդրությունների ներդաշնակեցում:

2000 թ. նոյեմբերի 4-5-ը Վրաստանի ֆինանսների նախարարի հրավերով կայացավ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Լ. Բարխուդարյանի այցը Վրաստանի Հանրապետություն<sup>9</sup>: Նախարարը վրաց մի շարք պաշտոնյաների հետ ունեցավ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկման հիմնական թեմաներն էին՝ երկու երկրների մաքսային և հարկային օրենսդրությունների ներդաշնակեցումը, տնտեսական գործունեության համար ընդհանուր դաշտի, օտարերկրյա ներդրողների համար նպաստավոր պայմանների, երկու երկրների գործարարների համար հավասար միջավայրի ստեղծումը: Հանդիպումների ժամանակ ընդգծվեց, որ պետք է ստեղծվեն պայմաններ երկուստեք հարկային լրացուցիչ արտոնություններից զերծ մնալու համար, պարզեցվեն սահմանային անցումներն ու ընդհանուր մակարդակի բերվեն սահմանում գանձվող տուրքերը: Վրաստանի էկոնոմի-

<sup>8</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ» (այսուհետև՝ ՊԴԱ), գործ 165, Եր., 2001, էջ 6-22:

<sup>9</sup> Տե՛ս «ՀՀ ֆինանսների նախարարության ընթացիկ արխիվ, հաշվետվություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի թիվիսի կատարած այցի մասին», Եր., 2000:

կայի նախարարի հետ հանդիպման ժամանակ կողմերը որոշեցին ստեղծել աշխատանքային խմբեր, որոնք պետք է մշակեին փոխշահավետ տնտեսական ծրագրեր, մասնավորապես՝ հայ-վրացական համատեղ ձեռնարկությունների ստեղծման նախագծեր: Այսուհանդերձ, թեև այս և նմանատիպ բազմաթիվ այլ հանդիպումների ընթացքում կողմերը համաձայնություն և պայմանավորվածություններ էին ձեռք բերում մի շարք հարցերում, հետագայում դրանց միայն մի փոքր մասն էր իրականություն դառնում: Պատճառներից մեկն այն էր, որ երկու երկրների շահերը շատ դեպքերում հակասում, անգամ նաև բախվում էին, ինչի հետևանքով հարցերի մեծ մասը, չգտնելով լուծման այլընտրանքային տարբերակներ, ուղղակի մտնում էին փակուղի: Երկու երկրների միջև մաքսային ռեժիմի և սպասարկման ոլորտում տեղ գտած խախտումները քննարկման առարկա են դարձել նաև արտգործնախարարների մակարդակով տեղի ունեցած հանդիպումների ժամանակ: 2000 թ. մարտի 18-ին Թբիլիսիում Հայաստանի և Վրաստանի արտգործնախարարների միջև կայացած հանդիպման ժամանակ վրացական կողմն արտահայտեց իր պատրաստակամությունը հետամուտ լինելու նմանատիպ հարցերի լուծմանը, ինչպես նաև շահագրգռվածություն հայտնեց անցագրային ռեժիմի ընդլայնման հարցում<sup>10</sup>:

Չնայած տարբեր հարցերում կողմերի ունեցած դիրքորոշումների տարբերություններին, կարելի է արձանագրել, որ 1998 թվականից հայ-վրացական տնտեսական հարաբերություններում բավականին մեծ առաջընթաց է գրանցվել: Այս առումով հատկապես մեծ դերակատարություն ունեցավ 1998 թ. նոյեմբերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Թբիլիսի: Այցի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցավ հարևան երկրի պաշտոնական տարբեր շրջանակների հետ, և պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվացնել երկկողմ տնտեսական հարաբերությունները՝ օգտագործելով երկու երկրների միջև գործող իրավապայմանագրային դաշտը, ինչպես նաև պայմանավորվեցին հետագայում ավելի սերտ համագործակցության նպատակով նոր պայմանագրեր կնքել: Վրացական կողմը շահագրգռվածություն ու պատրաստակամություն հայտնեց զարգացնելու ՀՀ-ի հետ համագործակցությունը տարածաշրջանային մի շարք ծրագրերում: Սուտ մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 21-23-ը, Երևանում հանդիպեցին Հայաստանի, Վրաստանի և Բուլղարիայի տրանսպորտի նախարարները և պայմանավորվեցին Փոթի-Վառնա լաստանավային հաղորդակցության միջոցով երեք պետությունների միջև երկաթուղային միջանցքի ստեղծման մասին<sup>11</sup>: Սա նշանակում էր նոր փուլ հայ-վրացական տնտեսական հարա-

<sup>10</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊՂԱ», գործ 135, էջ 21:

<sup>11</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊՂԱ, գործ 290, էջ 100:

բերություններում, քանի որ կողմերը սկսեցին համագործակցել նաև տարածաշրջանային բազմակողմ տնտեսական ծրագրերի շրջանակներում:

Որպեսզի կարողանանք պատկերացում կազմել Հայաստանի վարած արտաքին տնտեսական քաղաքականության մասին, առաջին հերթին անհրաժեշտ է ծանոթանալ 1998-2008 թթ. Հայաստանում կատարված տնտեսական տեղաշարժերի ցուցանիշին: Նմանատիպ վիճակագրությունը կարևոր է, քանի որ պետության վարած արտաքին տնտեսական քաղաքականությունը, այդ թվում առևտրատնտեսական հարաբերությունները հարևան երկրների հետ, ուղղակիորեն կապված են երկրի ներքին տնտեսական քաղաքականության և զարգացման տեմպերի հետ: Ստորև ներկայացնում ենք ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի տնտեսական աճի ցուցանիշներն ու համախառն ներքին արդյունքի ծավալները<sup>12</sup>:

Տարեթիվ	Տնտեսական աճ (տոկոսով)	Տարեթիվ	Համախառն ներքին արդյունք (ԱՄՆ դոլար, 1 շնչի հաշվով)
1998	7.3	1998	499
1999	3.3	1999	486
2000	5.9	2000	593
2001	9.6	2001	659
2002	13.2	2002	740
2003	14	2003	874
2004	10.5	2004	1113
2005	13.9	2005	1523
2006	13.3	2006	1983
2007	13.7	2007	2844

Այս ցուցանիշներից պարզ է դառնում, որ Հայաստանը նշված ժամանակահատվածում զրանցել է բավականին արագ տնտեսական աճ՝ տոկոսային արտահայտությամբ հասնելով նույնիսկ երկնիշ ցուցանիշի: Այս ամենն, իհարկե, ուղղակիորեն անդրադարձել է Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության վրա, քանի որ անհնար էր հասնել նման ցուցանիշների առանց մեծացնելու երկրի արտաքին առևտուրն ու զարգացնելու հարաբերությունները տնտեսական գործընկերների հետ: Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել նաև երկրում օտարերկրյա ներդրումների ծավալի մեծացման ուղղությամբ: Այս առումով նույնպես առաջընթացն ակնհայտ էր: Եթե 1998 թ. Հայաստանում կատարվել է 183 մլրդ դրամի օտարերկրյա ներդրում, ապա 2006 թ. այդ թիվը հասավ 892 մլրդ դրամի<sup>13</sup>: Ընդ որում, եթե մինչև 2002 թ. այդ ներդրումների ծավալի հիմնական մասն ապահովվում էր խոշոր մի

<sup>12</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն. 1998-2007», էջ 8-14:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 8:

քանի գործարքներով, մասնավորապես՝ հեռահաղորդակցության և էներգետիկ բնագավառներում, ապա դրանից հետո ներդրումների հիմնական ծավալն ապահովվում էր փոքր և միջին չափի գործարքներով: Հայ-վրացական տնտեսական հարաբերություններում կարևոր դերակատարություն ստացավ երկրների միջև առկա գործարար միջավայրի բարելավումը: 1998-2008 թթ. միմյանց տարածքում հայկական և վրացական կապիտալով ձեռնարկությունների քանակը բավականին աճել է: Երկու երկրներում առկա գործարար միջավայրի պայմանների բարելավման շուրջ քննարկումներ տեղի ունեցան 2001 թ. փետրվարի 17-ին Երևանում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և Վրաստանի պետական նախարար Գ. Արսենիշվիլիի հանդիպման ժամանակ<sup>14</sup>: Այստեղ նշվեց, որ վերջին տարվա ընթացքում բավականին նվազել է երկու երկրների միջև գործարար համագործակցության ծավալը, ինչի բարելավման համար պետք է ստեղծվեն նպաստավոր պայմաններ:

Հայ-վրացական տնտեսական առնչությունների զարգացման և խորացման գործում մեծ դեր է խաղում այն հանգամանքը, որ Հայաստանը արևմուտքից և արևելքից Թուրքիայի և Ադրբեջանի կողմից գտնվում է շրջափակման մեջ, ուստի նա փորձում է այդ բացը լրացնել Իրանի և Վրաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմամբ: Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ Հայաստանը Վրաստանի տարածքն օգտագործում է որպես տարանցիկ ուղի՝ տնտեսական կարևոր գործընկերներ Ռուսաստանի և Եվրոպական երկրների հետ իր ապրանքաշրջանառությունն իրականացնելու համար: Իսկ Վրաստանն այս նպատակով իր տարածքը տրամադրելու համար Հայաստանից բավականին մեծ գումարներ է զանձում: Հայաստանը մեծ ծավալի առևտրային հարաբերություններ ունի նաև Թուրքիայի հետ, որը նույնպես իրականացվում է Վրաստանի տարածքով: Կարելի է ասել, որ Հայաստանը նույնպես Վրաստանի համար ունի տարանցիկ որոշակի կարևորություն, քանի որ Վրաստանն իր հերթին առևտրատնտեսական կապեր ունի Իրանի հետ, որն իրականացնելու համար Հայաստանի տարածքով անցնող ճանապարհը ամենակարճն է: Հայաստանի և Վրաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորման և զարգացման համար կնքվել են մի շարք պայմանագրեր և համաձայնագրեր, որոնցից ամենակարևորը 1995 թ. օգոստոսի 14-ին կնքված «Ազատ առևտրի մասին» համաձայնագիրն է, որն ուժի մեջ է մտել 1998 թ. նոյեմբերի 11-ին և գործում է առ այսօր<sup>15</sup>: Այս համաձայնագրով կարգավորվում են ոչ միայն երկու երկրների միջև առկա առևտրային հարաբերությունները, այլ նաև՝ միմյանց տարածքով դեպի երրորդ երկրներ դուրս գալու նպատակով նրանց կողմից տրամադրված տարանցիկ ուղու համար զանձվող գումարների չափերը:

<sup>14</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊՂԱ», գործ 236, էջ 87:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, գործ 165, էջ 71:

Հայաստանի և Վրաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները վերջին 10 տարիների ընթացքում եղել են բավականին փոփոխական, սակայն կարելի է միանշանակ պնդել, որ այդ փոփոխության հաշվեկշիռը հիմնականում ունեցել է դրական միտում: Եթե 1998 թ. Հայաստանից Վրաստան է արտահանվել շուրջ 9 մլն 573 հազար, իսկ ներմուծվել է 26 մլն 830 հազար ամերիկյան դոլարին համարժեք գումարի ապրանք<sup>16</sup>, ապա արդեն 2007 թ. Հայաստանից Վրաստան է արտահանվել ավելի քան 59 մլն 500 հազար, և ներմուծվել 110 մլն 844 հազար դոլարին համարժեք գումարի ապրանք: Փաստորեն, եթե 1998 թ. Հայաստանի և Վրաստանի միջև առևտրում ներմուծման և արտահանման ինդեքսը 3 բացասական էր, ապա այժմ այն գրեթե 2 բացասական է: Սակայն այստեղ կա մեկ նուրբ հանգամանք ևս. եթե հաշվենք Վրաստանի ընդհանուր արտահանման և ներմուծման մեջ Հայաստանի հետ ապրանքաշրջանառությունը տոկոսային հարաբերակցությամբ, ապա դրանում մեծ տարբերություն կտեսնենք: 2007 թ. Վրաստանն արտահանել է 1 մլրդ 232 մլն 371 հազար և ներմուծել 5 մլրդ 214 մլն 883 հազար ամերիկյան դոլարին համարժեք գումարի ապրանք<sup>17</sup>: Փաստորեն, Հայաստանից Վրաստան արտահանվող ապրանքը կազմում է Վրաստանի ներմուծման ծավալի 1.14 տոկոսը, իսկ Վրաստանից Հայաստան ներմուծվող ապրանքը կազմում է Վրաստանի արտահանման շուրջ 9 տոկոսը: Այսինքն՝ Հայաստանը Վրաստանի համար մեծ շուկա է ապահովում և կարևոր նշանակություն ունի արտաքին առևտրի զարգացման տեսանկյունից: 1998-2008 թթ. Հայաստանի և Վրաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները և երկու երկրների միջև տնտեսական զարգացման փոփոխությունները ցույց տալու համար աղյուսակով ստորև ներկայացնում ենք այդ ժամանակահատվածում նրանց միջև իրականացված ներմուծման և արտահանման ծավալները<sup>18</sup>:

Տարեթիվ	Արտահանում (Հայաստանից Վրաստան, ԱՄՆ դոլար)	Տարեթիվ	Ներմուծում (Վրաստանից Հայաստան, ԱՄՆ դոլար)
1998	9 600 000	1998	26 800 000
1999	11 200 000	1999	26 900 000
2000	15 400 000	2000	19 500 000
2001	12 400 000	2001	18 400 000
2002	16 900 000	2002	31 800 000
2003	11 199 000	2003	30 762 000
2004	26 297 000	2004	54 408 000
2005	39 360 000	2005	39 699 000
2006	40 242 000	2006	73 602 000
2007	59 558 000	2007	110 844 000

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, գործ 235, էջ 43:

<sup>17</sup> Տե՛ս «Statistical Yearbook of Georgia: 2008», Tbilisi 2008, էջ 269-295:

<sup>18</sup> Տե՛ս «ՀՀ Վիճակագրական պետական ծառայություն, տարեկան հաշվետվություն», Եր., 1998-2008:



Դժվար չէ տեսնել, որ նշված տասը տարում Հայաստանի և Վրաստանի միջև առևտրային շրջանառությունը գրեթե մշտապես աճ է արձանագրել: Սակայն միևնույն ժամանակ կարելի է փաստել, որ այս ամբողջ ընթացքում Հայաստանը ավելի շատ ապրանքներ ներմուծել է Վրաստանից, քան արտահանել, բացառությամբ 2005 թ., երբ ներմուծման և արտահանման ծավալները եղել են գրեթե նույնը: Սա նշանակում է, որ որպես սպառման շուկա Հայաստանը Վրաստանի համար ավելի մեծ կարևորություն ունի, քան Վրաստանը՝ Հայաստանի:

Հայ-վրացական տնտեսական հարաբերությունների խնդիրների շարքում մեծ կարևորություն է ունեցել Հայաստանի նկատմամբ Վրաստանի ունեցած պետական պարտքի վերաձևակերպման հետ կապված հարցը: Այս խնդիրն ունի բավականին հին արմատներ, քանի որ գալիս է դեռևս 1990-ականների սկզբներից: Հայաստանի նկատմամբ Վրաստանի պետական պարտքը հիմնականում գոյացել է էլեկտրաէներգիայի մատակարարման, ինչպես նաև Վրաստանի քիմիական կոմբինատներին հայկական ձեռնարկությունների կողմից մատակարարված բնական գազի դիմաց կատարվելիք վճարների հաշվին: 2001 թ. դրությամբ Հայաստանի նկատմամբ Վրաստանի պետական պարտքի մնացորդը կազմում էր 19.6 մլն ԱՄՆ դոլար<sup>19</sup>: Դեռևս 1996 թ. Հայաստանի և Վրաստանի միջև կնքվել էր պայմանագիր<sup>20</sup>, որով վրացական կողմը պարտավորվում էր մինչև 2006 թ. վճարել իր պարտքը՝ ներառյալ տոկոսադրույքները: Ընդ որում՝ մինչև 2001 թ. Վրաստանը պետք է մարեր պարտքի տոկոսները, իսկ հաջորդ հինգ տարում՝ բուն գումարը: 2001 թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանը և Վրաստանի ֆինանսների նախարար Ջ. Նոդաիդելին ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարության միջև Հայաստանի Հանրապետության նկատմամբ Վրաստանի պարտքի վերաձևակերպման մասին» պայմանագիրը<sup>21</sup>, որով համաձայնություն էր ձեռք բերվում, որ երկու երկրների միջև պետք է կնքվի նոր համաձայնագիր՝ վերաձևակերպելու համար պարտքի վճարման չափերն ու դրանց ժամկետները: 2002 թ. փետրվարի 12-ին Թբիլիսիում ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանն ու Վրաստանի ֆինանսների նախարար Ջ. Նոդաիդելին ստորագրեցին «ՀՀ կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև ՀՀ-ի նկատմամբ ունեցած Վրաստանի պարտքի վերաձևակերպման մա-

<sup>19</sup> Տե՛ս «ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընթացիկ արխիվ, տեղեկանք Հայաստանի Հանրապետության նկատմամբ Վրաստանի ունեցած պետական պարտքի վերաբերյալ», Եր., 2001, էջ 2:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 3:

<sup>21</sup> Տե՛ս «ՀՀ էկոնոմիկայի նախարարության ընթացիկ արխիվ, արձանագրություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանի և Վրաստանի ֆինանսների նախարար Ջ. Նոդաիդելի միջև կայացած հանդիպման (06.09.2001)», Եր., 2001, էջ 4:

սին» համաձայնագիրը<sup>22</sup>, որով նախատեսվում էր, որ 1996 թ. պայմանագրով սահմանված 19.593 մլն ԱՄՆ դոլարի չափով պարտքից 7.837 մլն դոլարը կոնսոլիդացվում է: Այսինքն՝ 2001-2002 թթ. հիմնական գումարի գծով վճարման ենթակա գումարի մարումը պետք է իրականացվեր 2005-2021 թթ. ընթացքում՝ տարեկան ավելի փոքր մասնաբաժիններով: Ուշագրավ է նաև, որ այս պայմանագրով նախատեսված տոկոսավճարը կազմում էր մեկ տարվա հաշվարկով 3 տոկոս՝ նախկին 4-ի դիմաց, ինչը նշանակում էր, որ Հայաստանը որոշակի զիջումներ է անում այս հարցում:

Հայաստանն ու Վրաստանը սերտորեն համագործակցում են նաև էներգետիկ բնագավառում: Այս ոլորտում հատկապես կարևորվում է Աշոցք-Նինոծմինդա բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցումը, որով Հայաստանը պետք է էլեկտրաէներգիա մատակարարեր Վրաստանին: Այս էլեկտրահաղորդման գծի շինարարության վերաբերյալ կողմերի միջև հիմնական քննարկումները սկսվել են 1998 թվականից, երբ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը նոյեմբերին պաշտոնական այցով մեկնել էր Վրաստան: Իսկ արդեն 2000 թ. դեկտեմբերի վերջին 110 ԿՎ հզորությամբ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը հանձնվեց շահագործման: Հարկ է նշել, որ ի սկզբանե հայկական կողմի պահանջների մեջ մտնում էր այն կետը, որ այս գծից պետք է օգտվի նաև Ջավախքը՝ ապահովվելով մշտական հոսանքով: Սակայն այս հարցում վրացական կողմը մի շարք դժվարություններ հարուցեց՝ ասելով, որ Վրաստանը իրականացնում է էլեկտրամատակարարման կենտրոնացված քաղաքականություն, ուստի Հայաստանից Վրաստան արտահանվող էլեկտրաէներգիայի բաշխման հարցում չպետք է լինեն այսպես ասած «անհավասարություններ»: Վրացական կողմից այլ դժվարություններ ևս ստեղծվեցին: Մասնավորապես՝ մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց վճարվելիք գումարների հսկայական պարտքի գոյացումը, որի մարումը մինչև այժմ կատարված է մասամբ: Իսկ այնուհետև վրացական կողմը հայտարարեց, որ այն ընկերությունը, որի հետ Հայաստանը էլեկտրաէներգիայի մատակարարման առք ու վաճառքի պայմանագիր է կնքել, պետական իրավաբանական ուժ չունի, ուստի ստացվում էր, որ Հայաստանն անօրինական կերպով էլեկտրաէներգիա էր մատակարարել Վրաստանին<sup>23</sup>: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ 2001 թվականից Աշոցք-Նինոծմինդա էլեկտրահաղորդման գիծը սկսեց գործել ընդհատումներով, իսկ մատակարարված էլեկտրականության դիմաց գանձվելիք գումարներից առաջացած պարտքի հարցը տեղիք տվեց վիճաբա-

<sup>22</sup> Տե՛ս «Վրաստան», թերթ, 15.02.2002:

<sup>23</sup> Տե՛ս «ՀՀ էներգետիկայի նախարարության ընթացիկ արխիվ, տեղեկանք էներգետիկայի բնագավառում հայ-վրացական տնտեսական համագործակցության վերաբերյալ», Եր., 2002, էջ 2-5:

նությունների: Փաստորեն, մինչև այժմ չի լուծվել 1998-1999 թթ. Հայաստանից Վրաստան արտահանված հոսանքի դիմաց վճարվելիք գումարի հարցը:

Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում հայ-վրացական տնտեսական հարաբերությունների խնդիրների քննարկման հիմնական հարթակը Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովն էր, որի առաջին նիստը տեղի է ունեցել 1998 թ. նոյեմբերի 19-20 թիվի սիուսի<sup>24</sup>: Երկարատև բանակցություններից հետո նիստի ընթացքում հնարավոր դարձավ ստորագրել հայ-վրացական տնտեսական հարաբերություններին վերաբերող կարևոր մի շարք արձանագրություններ և համաձայնագրեր, որոնք հիմնականում վերաբերում էին վառելիքի և էներգետիկայի, տրանսպորտի, մաքսային քաղաքականության, առևտրի և զբոսաշրջության ոլորտներին: Կողմերը պայմանավորվեցին հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 1999 թ. մարտին Երևանում, սակայն այն հետաձգվեց և կայացավ 2001 թ. հունիսի 28-29-ը<sup>25</sup>: Համատեղ աշխատանքային խմբերի երկօրյա նիստերում քննարկվեցին և որոշումներ կայացվեցին հանձնաժողովի առաջին նիստի արձանագրության որոշումների կատարման, իրավապայմանագրային բազայի վիճակի և դրա հետագա զարգացման, տրանսպորտային հաղորդակցության, ֆինանսական փոխհարաբերությունների, էներգետիկ, սահմանային համագործակցության, սահմանային առևտրի, մաքսային, արդյունաբերության, զբոսաշրջության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Իսկ հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հունիսի 29-ին կողմերի միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրություն»<sup>26</sup>: Միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի դրական արդյունքներից ամենակարևորն այն էր, որ հայ-վրացական երկկողմ հարաբերություններում գոյություն ունեցող տնտեսական մի շարք խնդիրներ լուծելու նպատակով ստորագրված արձանագրության մեջ նախատեսվեց ստեղծել համապատասխան աշխատանքային խմբեր և սահմանել կատարման հստակ ժամկետներ: Թեև տնտեսական բնագավառում երկու երկրների միջև առկա խնդիրներից և ոչ մեկը հիմնովին լուծում չստացավ՝ հայկական կողմը գոհ մնաց

<sup>24</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊԴԱ, տեղեկանք հայ-վրացական հարաբերությունների հիմնական զարգացումների վերաբերյալ (1999)», Եր., 1999, էջ 3:

<sup>25</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊԴԱ», գործ 236, էջ 200:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 201:

կատարված աշխատանքի արդյունքներից՝ առաջընթաց արձանագրելով քննարկված մի շարք բնագավառներում: Հատկապես մեծ աշխատանք տարվեց իրավապայմանագրային, ֆինանսական փոխհարաբերությունների, տրանսպորտային հաղորդակցության, էլեկտրաէներգիայի և սահմանամերձ առևտրի ոլորտներում:

Երկու երկրների միջև առևտրատնտեսական ոլորտում առկա խնդիրներից մեկն էլ վերաբերում է տրանսպորտի բնագավառին: Այս խնդիրը կարելի է բաժանել երկու մասի. Հայաստանի և Վրաստանի միջև արտաքին առևտրային հարաբերությունների կարգավորում, Վրաստանի տարածքով դեպի Հայաստան և հակառակն անցնող բեռնափոխադրման պայմանների կարգավորում: Մի շարք խնդիրներ կան երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի հետ կապված: Երկաթուղային հարցերում մշտապես եղել են տարածայնություններ, քանի որ խնդիրներ են առաջացել ինչպես բեռնափոխադրումների հարցում Վրաստանի ստանձնած պարտավորությունների խախտումների, այնպես էլ երկաթգծի տեխնիկական թերությունների վերացման առնչությամբ: Դեռևս 1998 թ. մարտի 4-ից Հայաստանի համար ուժի մեջ մտավ «Երկաթուղային տրանսպորտի գործունեության համակարգման մասին» 1996 թ. Սերասխում Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի միջև կնքված պայմանագիրը<sup>27</sup>, որով նախատեսվում էր, որ այն ստորագրող երկրների միջև իրականացվող տարանցիկ բեռնափոխադրումների համար գործելու էր 50 տոկոս զեղչ, սակայն իրականում այդ պայմանագիրը չէր գործում: Վրաստանն իր տարածքով անցնող հայկական բեռների նկատմամբ զեղչ տրամադրում էր միայն 25-30 տոկոսի չափով, այն էլ տարվա մի քանի ամիսներին: Այս, ինչպես նաև երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների և դրանցով կատարվող տարանցիկ բեռնափոխադրումների հարցերը լուրջ քննարկման առարկա դարձան 2001 թ. փետրվարի 16-17-ը Հայաստանի վարչապետ Ա. Մարգարյանի և Վրաստանի պետնախարար Գ. Արսենիշվիլու Երևանում կայացած հանդիպման ժամանակ<sup>28</sup>, որտեղ քննարկվեցին նաև արդյունաբերության, սահմանային առևտրի, էլեկտրաէներգիայի և գազամատակարարման, ինչպես նաև առևտրատնտեսական բնագավառներին վերաբերող բազում այլ հարցեր: Սերասխյան տրանսպորտային համաձայնագրի և դրանով նախատեսված տարանցիկ բեռնափոխադրումների համար սահմանված զեղչերի վերաբերյալ քննարկումներ տեղի ունեցան նաև 1999 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում ՀՀ և Վրաստանի նախագահների հանդիպման ժամանակ<sup>29</sup>: Վրացական կողմն այս խնդրում իր դիրքորոշումը հիմնավորում էր այն բանով, որ անհամաձայ-

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 62:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 63-72:

<sup>29</sup> Տե՛ս «ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊՂԱ», գործ 290, էջ 67:

նությունները գալիս են Թուրքմենստանի հետ ձեռք բերված պայմանավորվածություններից, իսկ դա նշանակում էր խնդրի լուծման արհեստական ձգձգում: Հետագայում այդ նպատակով կազմվեցին մի քանի հանձնաժողովներ, սակայն դրանք անարդյունավետ գտնվեցին, և ըստ էության սայլը տեղից չչարժվեց: Վրաստանը մշտապես դժվարություններ և լրացուցիչ խնդիրներ է ստեղծում Հայաստանի համար տարանցիկ բեռնափոխադրումների իրականացման հարցում՝ նույնիսկ լրացուցիչ դժվարություններ ստեղծելով մաքսային կետերում: Սակայն այս առումով բավականին մեծ աշխատանք է տարվել, հատկապես 2003 թվականից հետո, և այժմ հայ գործարարները Վրաստանի տարածքում նման խնդիրների քիչ են հանդիպում:

Չնայած երկկողմ տնտեսական հարաբերությունների տարբեր բնագավառներում առկա մի շարք տարածայնություններին՝ հայ-վրացական տնտեսական կապերը գտնվում են բավականին բարձր մակարդակի վրա, և երկու պետությունների ղեկավար մարմինների կողմից ամեն ինչ արվում է դրանք էլ ավելի կայունացնելու համար: Բավականին շատ անելիքներ կան երկու երկրների մաքսային քաղաքականության համապատասխանեցման կամ զոնե դրանց մոտեցման ուղղությամբ, անհրաժեշտ է ավելի մեծացնել գործարար միջավայրում համագործակցության ծավալները՝ հասնելով նրան, որ նպաստավոր պայմաններ ստեղծվեն հարևան երկրում առևտրատնտեսական գործունեություն ծավալելու համար: Կարգավորման կարիք ունեն տարանցիկ բեռնափոխադրումների, ինչպես նաև զազի տեղափոխման համար տարանցիկ ճանապարհի տրամադրման հետ կապված որոշ հարցեր: Կարելի է ասել, որ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների բարելավմանը զուգընթաց՝ հնարավոր կլինի նաև էլ ավելի մեծացնել երկու ժողովուրդների միջև եղած փոխվստահության մթնոլորտը, ինչն էլ իր հերթին պարարտ հող կարող է դառնալ հայ-վրացական հարաբերությունների ավելի խորացման և զարգացման համար:

**РОМАН КАРАПЕТЯН – Экономический фактор как важное направление армяно-грузинских отношений (1998–2008).** – В становлении и развитии армяно-грузинских отношений основополагающую роль играют экономические связи. Соседи по Южному Кавказу, Армения и Грузия тесно взаимодействуют в торгово-экономической сфере. Этому с самого начала способствовали взаимосвязанность экономических систем и дружеское партнёрство. В 1998 г. экономика стала приоритетным направлением развития Армении, что укрепило её экономические и торговые отношения с дружественными странами, в том числе с Грузией. Об этом свидетельствуют рост товарооборота между ними, благоприятные условия

для бизнес-проектов и регулярные встречи разного уровня руководителей; при этом торгово-экономические отношения регулируются необходимыми договорами и соглашениями.

**ROMAN KARAPETYAN – *The Economic Factor as a Significant Direction in Armenian-Georgian Relations (1998-2008)***. – The economic ties have their important role in Armenian-Georgian relations. Being a part of the same region and neighboring countries, Armenia and Georgia are closely connected with trade and economic ties. A new type of economic relations between Armenia and Georgia were established in early 1990s, but because of some political and military problems in the region, that relations had a very slow development. There were some favorable conditions for the development of Armenian-Georgian economic ties, among which the interconnection of economic systems of the two countries, the circumstance, that they are strategic allies, which itself implies strong ties in the economic area can be mentioned. In 1998 the economic sphere was announced as a priority in Armenia, the result of which was that Armenia reported high rates in the relation of its economic partners, including Georgia. The import and export volume growth between the two countries, creating favorable conditions for business environment and often organized meetings in governmental various levels are the proof of that. And the trade-economic ties between the two countries are regulated by numerous treaties and agreements. However, there are a number of hampering circumstances and unresolved issues in Armenian-Georgian economic relations, which are mainly related to transit trade, customs area, the energy sector. Despite the current difficulties and number of obstacles, that are created by external factors, we can state, that Armenian-Georgian economic relations are at a very high level, which also contribute to the development of political relations between the two countries.